Կարգապահական գործ թիվ ԿԳ-16075

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունվարի 30-ի թիվ 32-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № ԿԳ/23-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Մանուկյանի (փաստաբանական գործունեության թիվ 749 արտոնագիր) (**այսուհետ՝ նաև Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Վահան Բաղդասարյանը **(այսուհետ Դիմող)՝** դիմելով Պալատ հայտնել է, որ իր որդին՝ Մարտին Բաղդասարյանը ծառայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ջաբրաիլի զորամասում: 29.05.2016թ. մարտական դիրքերում Մարտին Բաղդասարյանի զենքը պատահաբար կրակել է, իսկ Մարտին Բաղդասարյանը վիրավորվել է: Դիմողը հայտնել է, որ նշված դեպքի առթիվ հարուցված քրեական գործով իր որդու շահերը ներկայացնելու համար դիմել են փաստաբան Վահագն Մանուկյանին և վճարել 205.000 (երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ և 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլար գումար: Դիմողը նշել է, որ Վահագն Մանուկյանի հետ երեք անգամ պայմանավորվել են նշված գործի հետ կապված միասին գնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, սակայն փաստաբան Վահագն Մանուկյանը տարբեր պատճառաբանություններով խախտել է պայմանավորվածությունը: Դիմողը հայտնել է նաև, որ Վահագն Մանուկյանը որևէ ծառայություն չի մատուցել, քրեական գործին չի մասնակցել և չի ծանոթացել որևէ փաստաթղթի: Դիմողը Վահագն Մանուկյանին հայտնել է իր անվստահության մասին և ետ է պահանջել իր կողմից վճարված գումարը, սակայն վերջինս հայտնել է, որ այդ գումարը ծախսել է և կվերադարձնի, երբ որ կունենա: Դիմումին կից ներկայացվել է

Վահագն Մանուկյանի կողմից Վահան Բաղդասարյանից գումար ստանալու վերաբերյալ ստացականների պատճեններ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.09.2016թ. թիվ 222-Ա/ԿԳ-16075 որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 794) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 2.7.2., 3.1.8 և 3.8.5(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

20.07.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Տիգրան Մուրադյանին:

3. **<u>Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.</u>**

3.1. **<u>Դիմողի բացատրությունները</u>**

Դիմողը հայտնել է, որ պատասխանողն իրավական օգնություն ցույց չի տվել և չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը: Հայտնել է, որ ձեռք բերված պայմանավորվածությամբ Պատասխանողի կողմից պետք է ներկայացվեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ) ծառայող որդու շահերը՝ 29.05.2016թ. մարտական դիրքում զենքի կրակոցից վիրավորվելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում: Երեք անգամ պայմանավորվածություն է եղել այդ գործի հետ կապված ԼՂՀ գնալու համար, սակայն տարբեր պատճառաբանություններով Պատասխանողը խախտել է պայմանավորվածությունը, ծառայություն չի մատուցել: Պատասխանողը չի վերադարձրել ստացված հոնորարը: Հայտնել է, որ քրեական գործով որդու շահերը ներկայացնելու համար վճարել է 205,000 ՀՀ դրամ և 200 ԱՄՆ դոլար գումար, սակայն որևէ ծառայություն այդ գումարի դիմաց չի մատուցվել, հետ է պահանջել գումարը, որը Պատասխանողը խոստացել է վերադարձնել, երբ կունենա:

Վահան Բաղդասարյանը 23.08.2016թ. դիմումով ներկայացրել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի 19.08.2016թ. գրության պատճենը, որի համաձայն՝ 30.05.2016թ. հարուցվել է թիվ 91262916 քրեական գործը և կատարվում է նախաքննություն: Քրեական գործով Մ.Բաղդասարյանը դատավարական կարգավիճակ չունի, ինչի համար քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինակը չի տրամադրվել:

23.08.2016թ. դիմումով Վահան Բաղդասարյանը հայտնել է, որ փաստաբան Վահագն Մանուկյանի ծառայություններից հրաժարվել է, քանի որ երեք անգամ խախտել է տղային իրավաբանական օգնություն ցույց տալու համար ԼՂՀ գնալու պայմանավորվածությունը: Նշել է, որ իրենց միջև պայմանագիր չի կնքվել, միայն առկա են Վահագն Մանուկյանի կողմից գումարներ ստանալու ստացականները: Պահանջել է

վերադարձնել ստացականներում նշված գումարը, պատասխանել է, որ կվերադարձնի, երբ կունենա:

Պալատի խորհրդի նիստերին Դիմողը ներկայացել է և տվել նույնաբովանդակ բացատրություն, ինպիսիք հայտնել էր կարգապահական գործի նախապատրաստման ժամանակ:

3.2. <u>Պատասխանողի բացատրությունները.</u>

Կարգապահական գործն նախապատրաստելու ընթացքում Պատասխանողը բացատրություն չի տվել: Ըստ նախապատրաստողի վերջինս մեկ անգամ պատասխանել է նախապատրաստողի հեռախոսազանգին, հայտնել է, որ պատասխան կներկայացնի, դժգոհելով Վահան Բաղդասարյանի գործողություններից նշել է, որ գումարը կվերադարձնի, երբ հնարավորություն կունենա: Այնուհետև նախապատրաստողի հեռախոսազանգերին չի պատասխանել և որևէ պատասխան չի ներկայացրել:

Պատասխանողը պատշաճ ծանուցված լինելով իր վերաբերյալ քննվող կարգապահական գործի նիտերի օրերի և ժամերի մասին՝ Պալատի Խորհրդի նիստերին չի ներկայացել, ինչպես նաև գրավոր բացատրություն չի ներկայացրել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

16.08.2016թ. գրությամբ կարգապահական գործ նխապատրաստողի կողմից Պատասխանողին առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Պատասխանողի և Դիմողի միջև եղել է պայմանավորվածություն 29.05.2016թ. մարտական դիրքում զենքի կրակոցից վիրավորվելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում Դիմողի որդու շահերը ներկայացնելու համար, թե ոչ:
- Պատասխանողի և Դիմողի միջև եղել է պայմանավորվածություն նշված գործի հետ կապված միասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գնալու համար, թե ոչ, եթե այո, ապա, քանի անգամ է եղել և ինչ պատճառով է խախտվել պայմանավորվածությունը,
- Նշված գործի հետ կապված ծառայություններ մատուցվել են Պատասխանողի կողմից, թե ոչ, եթե այո, ապա ինչ գործողություններ են կատարվել,
- Քրեական գործով Դիմողի որդու շահերը ներկայացնելու համար Պատասխանողին վճարվել է 205,000 ՀՀ դրամ և 200 ԱՄՆ դոլար, թե ոչ, եթե այո, ապա այդ գումարի դիմաց փաստացի աշխատանք կատարվել է, թե ոչ:
- Դիմողը պահանջել է վերադարձնել նշված գումարը, այն Պատասխանողի կողմից ենթակա է վերադարձման Դիմողին, թե ոչ:

Վահագն Մանուկյանի կողմից պատասխան չի տրվել:

Նախապատրաստող անձը 19.09.2016թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն փաստաբան Վահագն Մանուկյանը բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել Մարտին Բաղդասարյանին, հանձնարարության կատարմանն ուղղված գործողություններ

չի ձեռնարկել, չկատարած աշխատանքների համար ստացականներով ստացած հոնորարը չի վերադարձրել Դիմողին:

Դիմողը և Պատասխանողը Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացել:

27.09.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հունվարի 30-ին, ժամը՝ 18.30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը՝

1. Մարտին Բաղդասարյանին իրավաբանական ծառայություն մատուցելու համար Վահագն Մանուկյանը 01.06.2016թ. ստացել է 60.000 ՀՀ դրամ, որի վերաբերյալ պայմանագիրը պետք է կնքվեր 02.06.2016թ-ին:
   Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի ստորագրությամբ ստացական վերնագրված գրությամբ, Դիմողի բացատրությամբ:
2. Վահագն Մանուկյանը՝ Մարտին Բաղդասարյանին իրավաբանական ծառայություն մատուցելու համար վերջինիս հայր Վահան Բաղդասարյանից 03.06.2016թ. ստացել է 200 ԱՄՆ դոլար և 145,000 ՀՀ դրամ:
   Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի ստորագրությամբ առանց վերնագրի գրությամբ, Դիմողի բացատրությամբ:
3. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 91262916 քրեական գործով որպես փաստաբան կամ պաշտպան չի ներգրավվել, քրեական գործով վերջինիս մասնակցությամբ քննչական կամ դատավարական գործողություններ չի կատարվել
   Նշված փաստը հաստատվում է ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Շամիրյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին ուղարկված գրությամբ, Դիմողի բացատրությամբ:

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

ՀՀ Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի Գ.Գևորգյանը 30.01.2017թ-ին տրամադրել է տեղեկանք, որի համաձայն Վահագն Մանուկյանը փաստաբանական գործունեության թիվ 749 արտոնագիրը ստացել է 19.10.2007թ, և 2007թ-2017թ.թ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 11 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ: Համաձայն նշված տեղեկանքի հավելվածի՝ Պատասխանողի նկատմամբ 21.11.2016թ ԿԳ/175-Ա որոշմամբ առկա է չմարված տույժ՝ նկատողություն, և 26.01.2017թ-ի որոշմամբ ուժի մեջ չմտած տույժ՝ խիստ նկատողություն:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով Դիմողի բացատրությունը, հետազոտելով կարգապահական գործում առկա փաստաթղթերը և մյուս ապացույցներ, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Վահագն Մանուկյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրիքի 2.7.2. և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.8.5 ենթակետի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից տրված ստացական վերնագրված և առանց վերնագրի գրություններից **(այսուհետ միասին՝ Ստացականներ)** հետևում է, որ վերջինս գումարները ստացել է Մարտին Բաղդասարյանին իրավաբանական ծառայություն մատուցելու համար: Այդ Ստացականները համադրելով Դիմողի կողմից հայտնած և ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնի 19.08.2016թ. գրությամբ նշված տվյալների հետ, ստացվում է, որ Մարտին Բաղդասարյանին իրավաբանական օգնություն պետք է տրվեր ԼՂՀ ՊԲ 59703 զորամասում 29.05.2016թ. տեղի ունեցած դեպքի առթիվ 30.05.2016թ. հարուցված թիվ 91262916 քրեական գործի շրջանակներում:

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետ՝ Կարգ)** 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Նշված դրույթից ելնելով Պատասխանողի կողմից նախապատրաստողի գրավոր հարցերին չպատասխանելն անհիմն է համարվում, այն մեկնաբանվում է ի վնաս Պատասխանողի, իսկ այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ Պատասխանողը հրաժարվել (խուսափել) է պատասխան տալուց, համարվում է ապացուցված:

Նշվածից ելնելով, հաշվի առնելով ստացականները, Վահան Բաղդասարյանի կողմից 16.06.2016թ. և 23.08.2016թ. դիմումներով հայտնած տվյալները, որ փաստաբան Վահագն Մանուկյանն երեք անգամ խախտել է Մարտին Բաղդասարյանին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ԼՂՀ գնալու պայմանավորվածությունը, ինչի համար հրաժարվել է նրա ծառայություններից, պահանջել է վերադարձնել ստացականներում նշված գումարը՝ չի վերադարձրել, ինչպես նաև հաշվի առնելով նախապատրաստողի պահանջով Պատասխանողի կողմից գրավոր բացատրություն չներկայացնելու հանգամանքը, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանը բարեխիղճ (որևէ) իրավական օգնություն ցույց չի տվել Մարտին Բաղդասարյանին, հանձնարարության կատարմանն ուղղված գործողություններ չի ձեռնարկել, ինչպես նաև որևէ այլ պատճառով չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը, չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնին, խուսափել է մեկնել ԼՂՀ տարածք Մարտին Բաղդասարյանին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, վերջինիս մասնակցությամբ որևէ քննչական կամ դատավարական գործողության չի մասնակցել:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին կետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Փալատի խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 3.8.5 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման, քանի որ տվյալ կարգապահական գործով հաստատված փաստերի և դրանք հիմնավորող ապացույցների ուսումնասիրության արդյունքում Պալատի

խորհուրդը չի կարող հետևության հանգել փաստաբանի կողմից նման խախտումներ կատարելու վերաբերյալ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պատասխանողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առել վերոհիշյալ հանգամանքները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և 3-րդ մասի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահագն Մանուկյանի (փաստաբանական գործունեության թիվ 749) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.8.5(1) ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Վահագն Մանուկյանին (փաստաբանական գործունեության թիվ 749) մեղավոր ճանաչել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2. և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար.

3. Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին սույն որոշումը ստանալու պահից 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, չորս ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողի և Պատասխանողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյան